ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Ս. Թ. ապրիլի 20-ին, Զատկական տոնի առթիվ, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, հավատացյալների խուռն բազմության ներկայությամբ, հանդիսավոր պատարագ մատուցվեց։ Պատարագիչն էր Գեր. Տ. Ռուբեն եպիսկոպոսը, որը ավուր պատշաճի քարոզ կարդաց։

Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Զատկական տոնի առթիվ Վեհափառ Հայրապետը բազմաթիվ շնորհավորական հեռագրեր է ստացել Տանն Կիլիկիո Վեհափառ Կաթողիկոսից, Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքներից, ՍՍՌ Միության ու արտասահմանի թեմերի առաջնորդներից, Բարեգործական ընկերություններից և այլ անձերից։

***

Զատկական տոնի առթիվ Վեհափառ Հայրապետի կողմից շնորհավորական հեռագրեր են հղվել Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսիին և Վրաց կաթողիկոս Կալիստրատին, որոնցից նույնպես ստացվել են Վեհափառ Հայրապետի անունով փոխադարձ շնորհավորական հեռագրեր։

***

Աղեքսանդրիայի (Եգիպտոս) Հայոց եկեղեցու հովիվ Տ. Մեսրոպ քահանա Քէօշկերյանին Վեհափառ Հայրապետը պարգևատրել է ծաղկյա փիլոնով և լանջախաչով, միաժամանակ ավագության կոչում շնորհելով նրան։

***

Աղեքսանդրիայի (Եգիպտոս) Հայոց եկեղեցու հովիվ Տ. Հայկազուն քահանա Ոսկերչյանը Վեհափառ Հայրապետի կողմից պարգևատրվել է ծաղկյա փիլոնով և լանջախաչով։

***

Ապրիլի 10-ին Մայր Աթոռ ժամանեց Իրանա-Հնդկաստանի թեմի առաջնորդ Գեր. Տ. Վահան եպիսկոպոս Կոստանյանը, որը Վեհափառ Հայրապետին զեկուցեց իր թեմի գործերի դրության մասին։

Մայիսի 15-ին Գեր.Տ. Վահան եպիսկոպոս Կոստանյանը մեկնեց իր թեմը։

***

Ապրիլի 28-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատվիրակությունը, բաղկացած Ա. Առաքելյանից և Ն. Մանուկյանից, մեկնեց Բեյրութ, բարերար Մ. Մսըրլյանի կողմից Մայր Աթոռին նվիրված տպարանի փոխադրության գործը կարգավորելու համար։

***

Մայիսի 1-ին Եզնիկ վարդապետ Ազնավուրյանը Ս. Գեղարդի վանքի վանահայր նշանակվելով մեկնեց իր պաշտոնատեղին։ Ս. Գեղարդում ներկայումս վերանորոգվում են վանքի սենյակները։ Ս. Գեղարդի վանքում հիմք է դրվելու մեղվաբուծական տնտեսության։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Զ-Ի ԶՐՈՒՅՑԸ ՏԱՍՍԻ ԹՂԹԱԿՑԻ ՀԵՏ

Մայիսի 17-ին ՏԱՍՍ-ի թղթակիցը Էջմիածնում այցելեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Զ-ին։

Թղթակցի հետ ունեցած զրույցում Վեհափառ Հայրապետը հայտնեց.

«Հայաստանի կառավարությունը, ժողովուրդը և Հայ Եկեղեցու կենտրոն Էջմիածինը ներկայումս պատրաստվում են դիմավորելու Հայրենիք՝ Սովետական Հայաստան դարձող հայերին։

ԳՐԱԴԻՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ